

ՌՈՒՍԵՐՆԵՒՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԲԱՌԱՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏՐՈՍ ԲԵԴԻՐՅԱՆ, ՆԱՐԻՆ ԶԵՔԵՅԱՆ

Բառապատճենումը հնագույն երևույթ է մեր (և ոչ միայն մեր) լեզվում: Գրաբարի պատճենած բառերին տարբեր առիթներով անդրադարձել են Հր. Աճառյանը, Ա. Մեյն¹ և Լորիշներ: Մեր օրերում բավական հանգամանորեն խոսվել է ռուսերենից բառապատճենումների մասին, որոնց խոր վերլուծումով ու գնահատումով առաջիններից մեկը հանդես է եկել Գ. Սևակը²: Նա մասնավորապես նշում է. «Այդ (բառապատճենման—Պ. Բ., Ն. Հ.) տեխնիկան կենդանի է նաև ներկայումս ու տալիս է խոշոր աշտադրանք, ռուսերենի ընդօրինակումով, օրինակ՝ ընդհատակյա, հակազոռժել, հակազազ, զրա-հաճառ, ախանաճեռ և հարյուրավոր այլ բառեր»³: Ռուսերենից բառապատճենումները առանձին ուսումնասիրությունն չունի, որով է դարձրել Ս. Ղազարյանն իր մի շարք գործերում, որոնցից հատկապես հիշատակելի է «Ռուսերենի դերը արդի հայերենի զարգացման մեջ» աշխատությունը⁴: Հետագայում տարբեր հեղինակներ զանազան առիթներով անդրադարձել են ռուսերենից պատճենումների խնդրին⁵: Նրանք ավելի հաճախ խոսել են պատճենում-նորակազմությունների և ավելի քիչ՝ իմաստային պատճենումների մասին: Ըստ որում, գերազանցապես քննել են իրենց ձեռքի տակ եղած նմուշները առանձին-առանձին, իբրև ինքնակա իրակություններ և գրեթե չեն խոսել ընդհանրա-կանացած կամ ընդհանրականացած երևույթների մասին: Այլ կերպ ասած՝ դիտվել է, որ այսինչ բառը կամ իմաստը պատճենվել է ռուսերեն համապատասխան բառից կամ իմաստից, բայց տեսադաշտից դուրս են մնացել կա-ղապարի արժեք ձեռք բերած կամ ձեռք բերող պատճենումները:

Այս տեսակետից բացառություն է կազմում Գ. Սևակի մեկ դիտարկումը: Նա նկատել է, որ տերմինաբանական կոմիտեի 1943 թ. որոշմամբ էվա-կուացնել, կոմբինացնել, մաքրիլիզացնել և օկուպացնել բայերի որդեգրումով «մի նոր դուռ բացվեց մեր լեզվի բառակազմության և մասնավորապես բայա-փոխառության առաջ: ...այս նոր բառակազմությունը... հնարավոր է դարձ-նում փոխառնել օտարազգի բայեր այն դեպքերում, երբ նրանց արմատները հայերենում գործածական չեն կամ չեն էլ կարող լինել...»⁶: Այս տողերից

¹ Հր. Աճառյան, Հիակատար քերականություն հայոց լեզվի: Ներածություն, Երևան, 1955, էջ 381—384, Ա. Մեյն, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978, էջ 131:

² Գ. Սևակ, Հայոց լեզվի զարգացման սովետական փուլը, Երևան, 1946, նույն ի՛ ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 131—143:

³ Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 135:

⁴ Ս. Ղազարյան, Ռուսերենի դերը արդի հայերենի զարգացման մեջ, Երևան, 1947:

⁵ Տե՛ս Ա. Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, էջ 73—75, 102, «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում», Երևան, 1973, էջ 50—58, 143—144, 167—169, 244—246, Վ. Դ. Առաքելյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, 1979, էջ 225, 372—373, Գ. Բ. Զառուկյան, է. Բ. Աղայան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, I մաս, պրակ Ա, Երևան, 1980, էջ 338—339:

⁶ Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 141:

կարելի է եղբակացնել, որ հեղինակը դիտարկել է մի բան, որ արդեն դուրս է գալիս առանձին իրականության շրջանակներից, այն է՝ հայերենի -ացնել բաղադրության համապատասխանեցումը ռուսերենի -изировать, -ировать բայակերտ ածանցներին, իսկ սա ոչ այլ ինչ է, եթե ոչ մի կազապար, որով պատճենվել, պատճենվում են ու դեռ կպատճենվեն նորանոր բայեր՝ օտար կամ նույնիսկ հայերեն արմատներով (ակտիվացնել, նորմալացնել կամ բնականացնել...): Այս առումով չի կարելի անուշադրության մատնել նաև ռուսերենի հետևողությամբ ենթարկել բայով հարադրականների կազմումը⁷ (подвергать критике— ֆենադատության ենթարկել և այլն):

Անհրաժեշտ է նշել, որ պատճենման կաղապարների առաջացումը հիմնականում նոր, ավելի ճիշտ՝ նորագույն երևույթ է մեր լեզվում: Ասում ենք «հիմնականում», որովհետև չենք կարող զանց առնել հեռավոր անցյալում հունարան դպրոցի ստեղծած, ավելի ճիշտ՝ հին հունարենից պատճենած նախածանցների օրինակը, որոնք դարեր շարունակ օտար բառերի, մասնավորապես տերմինների պատճենման համար կաղապարի դեր են կատարել⁸:

Սակայն, ինչպես ասվեց, այս երևույթը հիմնականում նոր է, տարածվել է վերջին 25—30 տարիների ընթացքում և կարծես թե է՛լ ավելի է ծափավելու առաջիկայում: Այստեղ մեր նպատակը հենց այդ նորի վերհանումն է՝ գլխավոր, ամենատարածված, թվով 11 կաղապարների ներկայացմամբ:

Ռուսերենից այս կարգի ամենահին պատճենումը թիրևա за—անգրհամապատասխանեցումն է, որը նախ կիրառվել է անցյալ դարում՝ Закавказье-ի Անդրկովկաս տառացի թարգմանությանը, հետո օգտագործվել աշխարհագրական անունների և անվանումների կազմություն—պատճենումների մեջ (Անդրկարպատներ, անդրկարպատյան, անգրովկիանոսյան=անդրովկիանյան, անգրծովյան <Закавказье, закавказский, закавказский, за-морский>⁹, Սակայն մեր օրերում այդ համապատասխանությունն ավելի է ընդարձակվել և մուտք է գործել ոչ աշխարհագրական բառերի ոլորտը. այսօր այդ նախածանցին ենք դիմում, երբ հարկ է լինում ռուսերեն за- կամ транс- նախամասնիկներով կազմված բառերը թարգմանել: Այսպես, բոլորովին նոր կազմություններ են՝ անգրմոսֆերային <заатмосферный, անգրմոլորակային <запланетный, անդրուրան, անդրուրանային <трансурани, трансуранный, անգրազգային <транснациональный: Այս վերջինը երբեմն թարգմանում են նաև վերագրային, որ ավելի շուտ կհամապատասխաներ наднациональный-ին: Հմտ. Վազմակերպությանը լայն աջակցություն են ցույց տալիս Արևմուտքի անգրազգային մոնոպոլիաները...»¹⁰ և «...Նրկրի

7 Նույն տեղում: Միևնույն դիտողությունը տե՛ս «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում», էջ 169:

8 Հունարան դպրոցի «արհեստականորեն ստեղծած» նախածանցների «մի մասը հաստատուն կերպով մտավ մեր լեզվի մեջ և մեծ ճկունություն տվեց նրան, մասնական դիտական տերմիններ ստեղծելու գործում» (տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 178):

9 Շատ հավանական է, որ ռուսերենի за-ն իր հերթին պատճենումն է եվրոպական trans-ի (Transcaucasus. Հմտ. նաև transcontinental > трансконтинентальный > անգրմայրցամաքային): Անուշուտ, նոր և ինքնուրույն կազմություն է транссибирский > անդրսիբիրյան-ը: Սակայն մենք այս և մնացած դեպքերում մի կողմ ենք թողնում ռուսերեն—այլ լեզուներ հարաբերությունը: Հայերեն բառերում անգր-ը երբեմն համապատասխանում է до-ին (ոչ անպայման սրանից պատճենված), ինչպես՝ допотопный—անդրֆենդեղյան, доисторически—անգրպատմական: Վերջինս մոռացվել է. գերադասում են նախապատմական-ը:

10 «Երեկոյան Երևան», 5. XII. 1978:

շուկան 90 տոկոսով զավթել են «շորս քույրերը»՝ վերագրված շորս ընկերություններ...»¹¹։ Երկուսն էլ՝ թարգմանական բնագրում։

Մեր գարի 20-ական թվականների վերջին ударник-ից պատճենվեց հայտնի հարվածային-ը, ի՞նչ զա մի տեսակ սկիզբ եղավ, որ այնուհետև -ային-ն օդտագործվի -НИК-ով ռուսերեն բառերի պատճենման համար. многостаночник>բազմաօտոցային, разрядник>կարգային (մարզական), перворазрядник>առաջին կարգային և այլն։ Թեև -НИК-ը մեր լեզվում ունի և այլ միջոցներով պատճենումներ (համտ. лыжник>դաճուկորդ, месячник>միամսյակ), և -ային-ն էլ, իր հերթին, համապատասխանեցված է ռուսերենի նաև այլ միավորների պատճենման, ինչպես՝ -ОВЫЙ (участковый>տեղամասային, правофланговый>աջթևային), -ОВОЙ (угловой>անկյունային) և այլն¹²։

Այս պատճենումների ընդհանրականանալն ունի մի այլ՝ ձևաբանական կողմ ևս, որը պակաս կարևոր նշանակություն չունի մեր լեզվում այժմ ընթացող տեղաշարժերի ասպարեղում։ Բանն այն է, որ հիմնականում ածականակերտ -ային վերջածանցը այժմ ավելի ու ավելի է ակտիվանում նաև գոյականակերտ դերով, չենց վերելում բերված վերջին 3 բառերը ինչպես ռուսերենում, այնպես էլ հայերենում ունեն ածականի ու գոյականի ձևաբանական արժեքներ (համտ. տեղամասային լիազոր—տեղամասային>участковый уполномоченный—участковый)։

Համեմատաբար մեծ վաղեմություն ունի նաև -ավում վերջածանցի համապատասխանեցումը -оватый || -еватый-ին. օրինակ՝ դժվարավում<трудноватый (բայց՝ узокватый, тесноватый—ցելիկ. սա պատճենում չէ)։ Սակայն մի վերապահություն. երբ ռուսերենի ածականը կարճ ձևով ստորոգյալի արժեքով է հանդես գալիս, թարգմանելիս արդեն դիմում ենք -ավում ածանցից առաջ մեր ունեցած ավանդական միջոցին՝ մի քիչ կապակցությանը. трудновато—մի քիչ դժվար է (նույնը վերաբերում է նաև այս ձևի մակրական արժեքին)։

Անդրկովկաս, հարվածային և -ավում-ով կազմված օրինակների վերլուծությունը կոչված է պարզելու այժմ տարածված ու տարածվող երևույթի ակունքները, ցույց տալու նրա նախադեպերը։ Այստեղ մեջ բերենք այն նորագույն, աչքի ընկնող պատճենումները, որոնք մեր արդի լեզվում ձեռք են բերել կաղապարի արժեք։

1. Հայերենը վաղուց ունի ածականը և ունակություն գոյականը, որոնք հոմանիշ են ռուսերենի способный, способность բառերին։ Սակայն մեր օրերում դրանք դարձան ածանցական միավորների (հայերենում) և ռուսերենից թարգմանություններում համապատասխանեցվեցին վերոհիշյալ միավորներին. трудоспособный, -ность>աշխատունակ, -ություն, пла-тежеспособный, -ность>վնասարունակ, -ություն, покупательная способ-ность>գնողունակություն և այլն։ Դեռ ավելին. հայերեն հիշյալ ածանց-

¹¹ Նույն տեղում, 6. XII. 1979։

¹² Սա մեր լեզվում նորություն չէ. դառնա՞ց հունարան դպրոցի պատճենած նախածանցների և կանսենք, որ հին հունարեն syn- նախածանցին համապատասխանեցված են 6 նախածանցներ՝ բաղ-, հոմ-, յառ-, շաղ-, ջառ-, փաղ-, anti-ին ու pro-ին՝ 3-ական՝ դեռ-, հաղ-, փոխ- և առ-, նախ-, վեր-։ Մյուս կողմից՝ վեր- ածանցն ունենք ana-ի, epi-ի ու hyper-ի դիմաց և այլն։ Եթե վիճակագրության լեզվին դիմենք, ապա պիտի ասենք. հին հունարեն 11 նախածանցներից յուրաքանչյուրի դիմաց ունենք հայերեն մեկից ավելի նախածանցներ և հայերեն 8 նախածանցներից ամեն մեկը համապատասխանում է հունարեն մեկից ավելի նախածանցների։

ները հանդիպադրվեցին ուսանողների նաև -аемый, -аемость || -имый, -имость-ին. пробиваемый, -ость>թափանցունակ, -ություն, проходимый, -ость>անցունակ, -ություն:

Անշուշտ չենք մոռանում, որ ուսանողն այս վերջին ածանցները ուրիշ գուգահեռներ էլ ունեն հայերենում՝ -ելի||-ալի (жодуруемый>ծածկագրելի, նաև՝ ծածկագրվող, неуловимый>անուգալի): Չենք կարող անտեսել նաև այն դեպքերը, երբ ուսանողն բառերն ու դրանց հայերեն նորագույն թարգմանությունները հիշյալ կաղապարներից դուրս գույգեր են ներկայացնում, ինչպես՝ взрывоопасный>պայթունակ, рождаемость>ծնունդ (և ոչ ծնողունակություն կամ ծնունդություն, որ հայերեն խորթ պիտի հնչեին. թարգմանում են նաև ծնելություն): Պետք է նկատի ունենալ, որ երբ նկարագրվում են պատճենումների բնագավառում այս նորոգ երևույթները, ոչ մի հավակնություն չկա համապատասխանությունները կամ կաղապարները բացարձակացնելու: Այլ կերպ ասած՝ դա չի նշանակում, թե հայերեն այսինչ կամ այնինչ լեզվական միավորը միշտ և ամենուրեք համապատասխանում է ուսանողների այսինչ կամ այնինչ միավորին:

2) Ռուս. -ёмкий, -ёмкость>հայ. -տար, -տարություն. трудоёмкий>աշխատատար, металлоёмкий>մետաղատար, энергоёмкий, -ость>էներգատար, -ություն,

3) Ռուս. со->հայ. -կից, համա-. соавтор>հեղինակակից, նաև՝ համահեղինակ, сопредседатель>համաճախագահ, рязь- содоклад(чик)>հարակից զեկուցում (զեկուցող):

4) Ռուս. от->հայ. ետ (ետ-), երբեմն՝ ապա- отучить(ся)>ետ սովորեցնել (ետ սովորել), отвыкнуть>ետ սովորել՝ վարժվել, նաև՝ ապավարժվել, отозвать, отзыв>ետ կանչել, ետկանչում, отток>ետ նստում (նաև՝ ներհստում, արհնստում),

5) Ռուս. де- || дез-, раз- || рас->հայ. ապա-. дестабилизировать, дестабилизация>ապակայունացնել, ապակայունացում, деколонизация>ապագադուրացում, дезориентация>ապակողմնորոշում, разгерметизация>ապաներմետացում:

6) Ռուս. про->հայ. -մետ. проамериканский>ամերիկամետ, проанглийский>անգլիամետ, прозападный>արևմտամետ, пропекинский>պեկիմամետ, произраильский>իսրայելամետ (մինչև վերջին 5 տարին նման կառույցներում օգտագործվում էր առավելաբար պրո-ն, երբեմն՝ -մոլ-ը. պրոամերիկյան, ամերիկամոլ...):

7) Ռուս. около->հայ. մերձ-. -մերձ, околоземный>մերձերկրյա окололитературный>մերձգրական:

8) Ռուս. под->ենթա-, ստոր- (այս երկուսը նոր չեն), -արկյալ. подстанция>ենթակայան, подведомственный>ենթագերառնչական, նաև՝ ենթակայության, подопечный, գիվանդդատական լեզվում՝ подмандатный>խնամարկյալ (վերջինը նաև՝ ենթամանդատ), подшефный>շեֆարկյալ, ենթաշեֆ:

9) Ռուս. горе->հայ. վայ. горе-марксист>վայ մարքսիստ, гореучёный>վայ գիտնական:

10) Վերջին տարիներս -աղ վերջածանցն է ավելի հաճախ գործածվում մարդկան տերմիններում, տարբեր մարդաձևերի ներկայացուցիչներին անվանելիս, ռուս. -ник, -атель, -ист, -ун և այլ բառակազմական միավորներ-

րի դիմաց. лыжник > զահնվորդ, ручник > ձեռնագնդորդ, метатель диска (копья, молота) > սկավառակ ձեռնորդ (հիզակահնորդ, մրճահնորդ), фигурист > գեղասանորդ, ватерполист > ջրագնդորդ, штангист > ծանրորդ (ծանրամարտիկ-ը համապատասխանում է тяжелоатлет-ին), прыгун > ցատկորդ, прыгун в воду (с трамплина, с вышки) > ջրացատկորդ (սուս-նացատկորդ, աշտարակացատկորդ), бегун > վազորդ (стайер > հեռավազորդ)¹³:

11) Ռուս. -стойкий > դիմացկուն, водостойкий > ջրադիմացկուն, влагостойкий > խոնավադիմացկուն, огнестойкий > հրադիմացկուն (հրակայուն-ը համապատասխանում է огнеупорный-ին), износостойкий > մաշվածքադիմացկուն:

Ինչ խոսք, նշվածներն ամենեկին էլ չեն սպառում ռուսերենից մեր օրերի բառապատճենումներում կայուն զուգահեռներ կազմող կառույցները, սակայն դրանք կարող են որոշ գաղափար տալ այն նորի մասին, որ առաջ է եկել, ծավալվել ու ծավալվում է արդի հայերենում:

Ռուսերենից պատճենումներն ընդհանրապես, բառապատճենումները՝ մասնավորապես որոշ տեղաշարժեր են առաջ բերել արդի արևելահայերենի ձևաբանական ու շարահյուսական մի շարք կարգերում, սակայն դրանք առանձին խոսակցության նյութ են¹⁴:

О НОВЕЙШИХ ЛЕКСИЧЕСКИХ КАЛЬКИРОВАНИЯХ С РУССКОГО ЯЗЫКА

ПЕТРОС БЕДИРЯН, НАРИНЭ ЭКЕЖАН

Резюме

До последних 2—3 десятилетий в армянском языке были зарегистрированы кальки с русского языка (да и не только с русского), как *отдельно сопоставляемые* языковые факты. Эти кальки, хоть и были многочисленными, еще не переросли в устоявшиеся модели, что отмечается уже в новейших калькированиях. Образовались такие постоянно действующие модели-соответствия, как: —*ունակ*, —*ունակութիւն* < способный, — способность или — *աեմый*, — *աեմость* // — *ւմый*, — *ւմость* (աշխատունակ, — *ութիւն* < трудоспособный, — ность, работоспособный, — ность; *անցունակ*, — *ութիւն* < проходимый, — ость); — *տար*, — *տարութիւն* < — емкий, — *емкость* (աշխատատար, — *ութիւն* < трудоемкий, — ость); — *մեա* < про — (ամերիկամեա < проамериканский) и т. д.

В настоящее время появляются все новые модели калькирования с русского языка.

¹³ Կան որանցից շատերի նաև իգականները՝ դռնվարդուհի, ձեռնագնդորդուհի և այլն: Առհասարակ նկատելի է, որ նույն ազդեցության հետեանքով — ունի իգականակերտն զգալիորեն աշխուժացել է այժմ:

¹⁴ Այս մասին մի հպանցիկ ակնարկ եղավ վերևում՝ — նիկ — ալին զուգահեռի կապակցութիւնը: Տե՛ս նաև նախորդ ծանոթութիւնը: